

**ՀԵԿՈՅՑՆԵՐ**  
**RELAZIONI**

## ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՆՉԸ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻԾԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱԾԽԱՐՀՈՒՄ

ՂԵՒՈՆԴ ԱԼԻԶԱՆԸ ՄԽԻԹԱՐԵԱՆ միաբանութեան լուսաւոր դէմքերից է, որի անունը կենդանութեան օրոք լայնօրէն յայտնի էր ԺԹ. դարի Եւրոպայի հայագիտական շրջաններին՝ որպէս բազմագիտակ հետազօտողի: Նա պատմաբան էր, հայագէտ, բնագէտ, աշխարհագրագէտ, հնագէտ, բանաստեղծ, մանկավարժ, թարգմանիչ:

Մեծագոյն աշխատասիրութիւնը, հայրենի գիտութեանն ու գրականութեանը նպաստ բերելու անձանձիր մղումը Ալիշանի գրական, գիտական ժառանգութիւնը հարստացրին մէկ մարդու համար ստեղծածի անհաւատալի չափերի:

Նշանաւոր գիտնականի մահուանից յետոյ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան հայրերը հրատարակեցին նրա կենսագրութիւնը, որը խիստ փաստահարուստ է, լի նրան անձամբ ճանաչողների վկայութիւններով: Ալիշանի նպատակն է եղել պետականութիւնը կորցրած, սակայն քաղաքակիրթ մարդկութեան պատմութեան մէջ իր կարեւոր դերն ունեցած Հայաստանը ներկայացնել օտարներին, նաեւ իր աշխատութիւններով հայ նոր բարձրացող սերնդին պատմել Հայաստանի լուսաւոր գործերով լի անցեալը, վերջինիս ապագան նախապատրաստելու ազգանուէր միտումով:

Ալիշանի կենսագրութեան մէջ կարդում եմք. «Գաղղիացի ուսեալ դէմքեր, վարժարան յաճախելով, մեր ազգի մասին շատ գոհացուցիչ տեղեկութիւններ կառնում: Հ. Ալիշան իր քնատուր ձիրքով օտարին գՀայաստան հրաշակերտ մը կը նկարագրէ եւ հայութեանը համեմարեղ ազգ մը: ... Հեռաւոր եւ խոր տեսութեամբ, վարժարանի հանդիսաւոր տօնախմբութեան օրերուն, հայրենիքի մասին միշտ կը կարդար գրաւիչ գաղղիերէն ճառեր»<sup>1</sup>:

1 ԵՐԵՄԵԱՆ ՍԻՄՈՆ Վ., *Կենսագրութիւն Է. Ալիշանի*, Վենետիկ, Ս. Ղա-  
զար, 1902, 74:

Ալիշանից մեզ հասել են բանաստեղծական մի քանի ժողովածուներ: Դրանց մի մասը գրաբարալեզու է: Սակայն նրա «Նուազներ» ժողովածուն արեւմտահայերէն գրական լեզուով է, եւ հեղինակն այս ժողովածուով դառնում է արեւմտահայ գրական նոր լեզուի հիմնադիրը: Այս իրողութիւնը յայտնի է ոչ միայն հայ բանասիրութեանը, այլեւ օտարազգի հայագէտներին՝ յատկապէս ռուսներին, որոնք Ի. դարասկզբին հայ առաջնակարգ բանաստեղծներին թարգմանեցին ռուսերէն՝ նրանց մասին յայտնելով գրականագիտական գնահատականներ: Որպէս բանաստեղծ՝ Ալիշանը ներկայացուեց Վալերի Բրիւսովի (1873-1924) կազմած «Поэзия Армении» ժողովածուում, ուր թարգմանաբար ներկայացուեց նրա «Հրազդան» հայրենաբաղձ բանաստեղծութիւնը<sup>2</sup>:

Ալիշանի բանաստեղծական ժառանգութիւնն առաւել հանգամանալի գնահատել է ռուս գրականագէտ, բանաստեղծ, թարգմանիչ, հայագէտ Իւրի Վէսելովսկին (1872-1919): Նրա կարծիքով Մխիթարեանների մէջ ամենատաղանդաւոր բանաստեղծն անվիճելիօրէն Ղեւոնդ Ալիշանն է, որը մեծ յաջողութեամբ հայերէն է թարգմանել Շիլլերի եւ Բայրոնի գործերից: Նա գրել է մեծաքանակ հայրենասիրական տխուր բանաստեղծութիւններ, որոնց խորթ են ազգայնամոլութիւնն ու չարութիւնը: «Երբեմն Ալիշանը դիմում է իր ազգի անցեալին՝ իր նախնիների հերոսական գործերից սփոփամբ քաղելով»<sup>3</sup>: Նա միաժամանակ նշում է, թէ Ալիշանի բանաստեղծութիւնը մեծ ազդեցութիւն է թողել ԺԹ. դարի հայ քնարերգութեան լաւագոյն բանաստեղծներից մէկի՝ Մկրտիչ Պէշիկթաշլեանի (մահ. 1868 թ.) ստեղծագործութեան վրայ<sup>4</sup>:

Ղեւոնդ Ալիշանը ռոմանտիկ բանաստեղծ է. նրա բանաստեղծութեան հիմնական ակունքներն են՝ հայ ժողովրդի պատմութիւնը, Աստուածաշնչի Հին ու Նոր կտակարանները, հայ ժողովրդական բանահիւսութիւնը:

Որպէս պատմաբան՝ նա խիստ արժեւորել է միջնադարեան հայ պատմիչների երկերը՝ յատկապէս ոսկեդարի: Նրա պաշտա-

2 «Поэзия Армении» с древнейших времен до наших дней в переводе русских поэтов, под редакцией со вступительным очерком и примечаниями В. Брюсова, Ереван 1987, 427-428.

3 ВЕСЕЛОВСКИЙ, Ю. А., Очерки армянской литературы, истории и культуры, Вступительная статья, составление, редакция и примечания Аллы Давтян, Ереван 1972, 129.

4 Անդ:

մունքի առարկան Մովսէս Խորենացին է, որի «Հայոց պատմութիւնը» խոր կնիք է թողել Ալիշան գիտնականի ու բանաստեղծի վրայ: Բանաստեղծական արուեստի ուսուցիչներն էին Գրիգոր Նարեկացին, Ներսէս Շնորհալին, Ֆրիկը եւ գրեթէ ողջ միջնադարի տաղասացները՝ ընդհուպ ժԸ. դար: Նա նաեւ շատ բարձր է գնահատել Հայ ժողովրդական բանահիւսութեան անանուն հիւսուածքները, որոնք սփռուած են Ալիշանի ամենատարբեր գրուածքներում: Դա յատկապէս երեւում է Հայերէն ու անգլերէն լեզուներով հրատարակուած «Հայոց երգ ուսմկականք» ժողովածուում, որը լոյս է տեսել Վենետիկում 1852-ին:

Ալիշանը 1874-ին Վենետիկում հրատարակել է «Քնար Ամերիկեան» ժողովածուն, որը լիովին հոգեւոր բնոյթի է եւ ըստ Աւետարանի քննում է կեանքի ու մահուան փոխարարբերութեան խնդիրը, հոգու անմահութեան գաղափարը:

Այդ ժողովածուում տեղ է գտել նաեւ ժԹ. դարի ամերիկեան նշանաւոր բանաստեղծ Հենրի Լոնգֆելլոյի (1807-1882) «Հնձոդն ու ծաղկումք» քերթուածը, որում հնձոդը մահն է.

է ում Հնձոդ, որոյ կոչի Մահ անուն,  
Եւ շուրջ արկեալ սուր մանգաղիկ՝  
Միով շնչով հնձէ գցորեանքն հասուն,  
Եւ զընդ նըմին բուսեալ ծաղիկ:<sup>5</sup>

Լոնգֆելլոյի թարգմանած Ալիգիերի Դանթէի կատակերգութիւնը համարուում է համաշխարհային թարգմանական գրականութեան գլուխգործոց: Լոնգֆելլոն վերաթարգմանել է Ալիշանի «Հայոց երգ ուսմկականք» ժողովածուի «Երգ արագիլի»<sup>6</sup> եւ «Մանուկն ու ջուրը» հիւսուածքները<sup>7</sup>:

Ուշագրաւ է, որ Ալիշանը «Քնար Ամերիկեան» ժողովածուի տիտղոսաթերթին խորագիրն անգլերէնով գետեղել է՝ «American Sacred Songs», translated into Armenian language ձեւով, որի բառացի թարգմանութիւնը կը լինի «Ամերիկեան սրբազան երգեր», թարգմանուած Հայերէն լեզուի: Սա նշում ենք, որովհետեւ ժողովածուի բոլոր հեղինակների քերթուածները խիստ հոգեւոր բնոյթի են ու կապուած են Աստծու, անդրաշխարհի կեանքի հետ: Դրանցից մէկի հեղինակն

5 «Քնար Ամերիկեան», հատրմտիր տաղք, Վնետիկ 1874, 96:

6 «Հայոց երգք ուսմկականք», Վնետիկ 1852, 61:

7 Անդ, 63-65: Տե՛ս նաեւ «Համրագիտական քառարան», հ. 1, Յրեւան 2016, 353:

է ժԹ. դարի նշանաւոր կին բանաստեղծուհի Շառլոտ Էլիոթը իր «Ի թողուլն գտուն՝ ի խնդիր ամոքագոյն կլիմայի» քերթուածով, որում նշանաւոր բազմաթիւ հոգեւոր հիմների հեղինակ բանաստեղծուհին հայ միջնադարի տաղասացների նման իրական կեանքը համարում է պանդխտութիւն ու երազում երկրայինը՝ Աստու կողքին.

Ի քեզ, ո՛վ իմ աստուածային ապաւեն,  
Համապագոյ պանդխտութեան կեանքն անցցեն,  
Մինչեւ ըզգաղցր եւ սուրբ հանգիստ իմ յետին  
Գլտից քեւ ի յերկին՝<sup>8</sup>:

Յօդուածի այս նախաբանը նպատակ ունի ներկայացնելու Ալիշանի բանաստեղծական աշխարհի ընդհանուր ուղղութիւնը, որի տեսադաշտում կը քննուեն նրա «Նուագներ» ժողովածուի վրայ վերոյիշեալ մտածումների խոր ազդեցութիւնը:

«Նուագներ» ժողովածուն կազմել ու առաջաբանը գրել է առաջնակարգ գրականագէտ Արամ Ինճիկեանը, իսկ բառարանը կազմել՝ ողջ կեանքը Ալիշանի ստեղծագործութեանը նուիրած Սուրէն Շտիկեանը: Ա. Ինճիկեանն իր առաջաբանի բնաբանն է ընտրել բանաստեղծի հետեւեալ պատգամը.

... Ուր որ հայրենի երգեր կլսուին՝  
Հոն հայրենիքը ողջ է:<sup>9</sup>

Մեզ յատկապէս հետաքրքրողը «Նուագներ» ժողովածուի «Երգք մահապետի» բաժինն է, որը հայ ազգի համար միշտ լինելու է արդիական պատգամ: Ալիշանի յիշատակի առիթով Արշակ Զօպանեանը՝ նրա ստեղծագործութեան քաջ գիտակն ու երկրպագուն, գրում է. «Ալիշան սիրտ մըն էր, քայց շատ մեծ սիրտ մը: Այդ սիրտը ամբողջապէս լեցուած էր երկու պարզ ու մեծ զգացումներով՝ Աստուծոյ սէրն եւ ազգին սէրը»<sup>10</sup>: Այս բնորոշման ցայտուն առհաւատչեան «Նահապետի երգերն» են: Ոչ մի իսկական գրող հէնց այնպէս, առանց խոր մտածելու, չի խորագրում իր գիրքը: Ինչու 27, 28, 29 տարեկանում երիտասարդ հասակում, գրուած իր հոյակապ բանաստեղծական երգերը Ալիշանը ամփոփեց «Նահապետի երգեր» խորագրի ներքոյ: Այս հարցի պատասխանը շատ յստակ է: Բաւական է բացենք Ստեփանոս Մալխասեանցի բացատրական բառարանը եւ նայենք նահապետ բառի բացատրութիւնը.

8 «Քննար Ամերիկեան», 34:

9 Ա.ԻՇԱՆ, Ղ., Նուագներ, Երեւան 1957, 3:

10 ԶՈՊԱՆԵԱՆ, Ա., Երկեր, Երեւան 1988, 412:

«Նահապետ – 1) մի տռիմի՝ ցեղի նախահայրը, ցեղապետ, տռիմապետ... 4) Խիստ ծերացած, ծերունագարդ մարդ»<sup>11</sup>, Բառի այս երկու բացատրություններն էլ լիովին համապատասխանում են ժողովածուի գաղափարական ուղղուածութեանը: Բանաստեղծը խօսում է ազգի ապագայով մտահոգ առաջնորդի մտահոգութեամբ, որը նաեւ տարիներին հեռաւորութիւնից եկող մարդկութեան փորձն էր իր մէջ կուտակել: Նա նոյն մտահոգութիւնն ունի իր ազգի համար, ինչը որ ունէր Հայազգի նախահայրը՝ Հայկը, որն իր սակաւաթիւ զօրքին գօտեպնդեց հետեւեալ խօսքերով. «...կամ զաջողութիւն մատանց մերոց ի մա ցուցեալ՝ ցրուեսցի ամբոխն, եւ մեք եղիցում յաղթութիւն ստացեալք»<sup>12</sup>:

Յետագայում էլ Բէլին յաղթելու պատգամը հայ բանաստեղծութեան մէջ տրուել է ամէն նոր եկող սերնդի, ինչպէս Գլորիգոր Մազիստրոսը ԺԱ., իսկ Նաիրի Զարեանը՝ Ի. դարում:

Դիմելով իր որդուն՝ Մազիստրոսն ասում է.

Ահա քեզ Բելայն հաս հանդէս եւ Թորգոմեանն Հայկայ...<sup>13</sup>

«Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգութեան մէջ էլ ծեր գուսանի երգում Հայկ նահապետը չի ենթարկւում Բէլի բռնակալութեանը եւ հերոսաբար պաշտպանում է իր երկիրը նուաճող Բէլից՝ նետահարելով նրան,

Եւ նետը սայրասուր՝ թըռաւ հասաւ քոնապետին,  
Կրծքի զրահը եօթնածալ՝ ծակեց,  
Եւ թիկունքից ելաւ եւ մըխրմունց գետին:  
Եւ Բէլ ընկաւ մեծաշռուչ  
Եւ Բէլ սատակեց:<sup>14</sup>

Իւրի Վեսելովսկին հիացական տողեր նուիրելով Ալիշանի Հայրենասիրական երգերին՝ միաժամանակ նշում է, թէ նրանցում չկան թշնամուն ուղղուած չարութեան եւ ատելութեան խօսքեր<sup>15</sup>:

11 ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Ս., Հայերէն քաղաքական քառաբան, Կ. III, Հ-Ո, Երեւան 2010, 439:

12 ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը եւ Ներածութիւնը Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Նմանահամութիւնը, Լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երեւան 1991, 35:

13 ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, Տաղասացութիւնք, Վեներտիկ 1868, 99:

14 «Հայ դրամատուրգիա», Ընտրանի, Կազմեց՝ Ս. Սահակեան: Առաջաբանը՝ Լ. Հախվերդեան, Երեւան 1985, 577-578:

15 ВЕСЕЛОВСКИЙ, Ю. А., Очерки армянской литературы, истории и культуры, 129.

Անշուշտ հայագետին անծանօթ է եղել գրաբարով գրուած «Երգ ու գնացք գորացն Հայոց ընդ Վահագնայ Մամիկոնեանց ի Շաւարշական դաշտին վրէժք» քերթուածը: Բանաստեղծութեան հէնց խորագրում շեշտուած է վրէժք բառը: Բանաստեղծը Հայկի սերունդներին մարտի է կոչում հայրենիքն ազատագրելու եւ հայի ազատութիւնն ու հաւատը խել ցանկացող թշնամուն պատժելու համար: Այս մարտակոչ բանաստեղծութիւնը վերածուել է խրոխտ ու ազատատենչ երգի ու ցայսօր յայտնի է յատկապէս իր սկզբնատողով.

Բա՛ւմ. փորձոտան քարծուստ քոմբիւնմ յԱրարատեան դաշտն ի վայր:<sup>16</sup>

Ալիշանն այնքան է սիրում Հայաստանը, որ նրան դիմում է որպէս իր որդու՝ յղելով անհրաժեշտ պատգամներ, որով նա պէտք է առաջնորդուի յետագայ կեանքում՝ նրան փաղաքուշ ձեւով անուանելով «Հայոց աշխարհիկ»: Հիանալի իմանալով Հայաստանի պատմութիւնը, աշխարհագրութիւնը, բուսական, կենդանական աշխարհը, մշակութային յուշարձանները՝ այդ գիտելիքները երեւան է հանում իր հափածոյ քերթուածներում: Բլբուլը, սարեակը, արագիլը, արտուտիկը, տատրակը, կարմիր վարդերը զարդարում են պաշտելի Հայոց աշխարհիկը, որը եղեմական երկիր է, ուր հովիւն ու հօտաղը, մշակուած դաշտերը վկայում են երկրի խաղաղ բնակիչների գեղեցիկ առօրեայի փաստը, եւ այդ իրողութիւնն ամէն հայ պէտք է գիտակցի: Ահա թէ ինչու ծեր Նահապետը Հայաստանի զաւակներին յղում է մշտապէս յիշելու իր պատգամները.

Հայրենեաց հարուստ է հող, ջուրն անուշ,  
Քանց օտար վարդ՝ քաղցր է հայրենեաց փուշ...  
Մ'ուրանայք գերկիրդ ու զագգըդ սիրուն,  
Ծառն՝ արմատով ծառ, տունն հիմամբն է տուն:<sup>17</sup>

Ալիշանի «Պիպուլն Աւարայրի» ծաւալուն քերթուածը Եղիշէի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկի գնահատման առաջին հափածոյ ծաւալուն ու սկզբնատիպ դարձած քերթուածն է Ներսէս Շնորհալու Վարդանանց նուիրուած հրաշք շարականից յետոյ:

Անտարակոյս վերջինիս ազդեցութեամբ են գրուած Ռափայէլ Պատկանեանի «Քաջ Վարդան Մամիկոնեանի մահը»<sup>18</sup> եւ դրան

16 Ալիշան, Ղ., Նուագներ, 97:

17 Անդ, 19:

18 ՊԱՏԿԱՆԵԱՆ, Ռ., Երկեր, Երեւան 1980, 60-78:

ի պատասխան՝ Միքայել Նալբանդեանի որպէս պարօղիա գրուած «Մամիկոնեան մեծ Վահանի պատասխանը» բանաստեղծութիւնը: Այդ պատասխանը, որով ներկայացւում է Նուարասկ գիւղում 484 թուականին Հայաստանի ինքնավարութիւնը հաստատող պայմանագիրը կնքելը, մարզպան Վահան Մամիկոնեանի կողմից, Նալբանդեանն ուղեցոյց է դարձնում ապագայ Հայաստանի համար՝ գրելով:

Էլ մեր երեսին մնա՞ց մի կաթիլ  
Ամօթի սուրբ ջուրն, որ քերան քանամ:  
Ո՛չ, թէ չեմք ուզում հողից հող կորչիլ,  
Թշնամու արիւնով մեր թրքին ջուր տամ,  
Ազգ, Եկեղեցի փրկեմք, ազատեմք,  
Ապա թէ՛ խօսեմք:<sup>19</sup>

Վարդան Մամիկոնեանի կերպարը եւ Աւարայրի ճակատամարտը ըստ Եղիշէի երկի՝ բանաստեղծութեան նիւթ դարձնելով՝ Ալիշանը բանաստեղծական ներշնչմամբ համակում է ընթերցողին եւ բացատրում, թէ ինչու հայրենիքը պաշտպանելու գործում Վարդանն ամէն մի հայի համար մշտական օրինակ է:

«Պալուկ Աւարայրի» պօէմում պատկերուած է նաեւ Եղիշէ պատմիչի կենսագրական փաստ, ըստ որի նա Մովսէս Խորենացու եւ միւս հայ ուսանողների հետ հինգերորդ դարում կրթութեան մէջ կատարելագործուել է յայտնի կրթական կենտրոններում՝ Ալեքսանդրիայում ու Աթէնքում: Վերադարձել է հայրենիք ու ծառայութեան անցել սպարապետ Վարդան Մամիկոնեանի մօտ ու շարունակ չրջել քաջ զօրավարի հետ ամէնուր: Ինքը՝ Եղիշէն էլ, իր պատմութեան ընծայականում նշում է, թէ ականատեսն ու մասնակիցն է Աւարայրի հերոսամարտին նախորդող, բուն հերոսամարտը ներկայացնող եւ դրան յաջորդող բոլոր պատմական իրադարձութիւններին: «Ահա ոչ ըստ կամաց արտօսարարի ողորմֆ մառազրեմք գրագում հարուածս՝ յարում պատահեցաք եւ մեք իսկ ակամատես լինելով»<sup>20</sup>,

Ըստ Եղիշէի են ներկայացւում այն նախարարները, որոնք Վարդան Մամիկոնեանի զինակիցներն էին ու նահատակուեցին նրա հետ՝ Գարեգին Սրուանձտեանցը, Արտակ Պալունին, Վահան Գնունին, Խորէն Խոռխոռունին, Արսէն Ընծայնոցն ու միւսները: Եւ ինչպէս Եղիշէն է վկայում, թէ ընկած դիակներն այնպէս խիտ

19 ՆԱԼԲԱՆԻՅԱՆ, Մ., ԵՆԺ Վեց հատորով, հ. 1, Երևան 1979, 127:

20 ԵՂԻՇԷ, Վասմ Վարդանայ եւ Հայոց պատերազմի, Երևան 1989, 10:

էին, ինչպէս անտառի կտրատուած փայտերը<sup>21</sup>, նոյնկերպ Ալիշանը գրում է:

Հոն մեծ բազմութիւն գինչ փայտ ի յամտառ  
Կամ աշնանաթափ տերեւ հողմավար:<sup>22</sup>

«Ողբամ զփեզ, Հայոց աշխարհ» քերթուածն Ալիշանը գրել է Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւնը» եզրափակող «Ողբ»-ի զօրեղ ազդեցութեամբ, որն իր հերթին գրուած է Հին Կտակարանի Երեմիա մարգարէի ողբի օրինակով:

Ընդհանրապէս Մովսէս Խորենացուց սկսած՝ հայերի ճակատագիրը ողջ միջնադարում յաճախ է համեմատում հրեաների պատմական անցեալի հետ: Այս նոյնը կատարում է նաեւ Ալիշանը՝ հայ միջնադարեան մատենագրութեան փայլուն գիտակը:

ԺԳ. դարի բանաստեղծ Ֆրիկն իր «Գանգատ բանք վիման ընդ ամենագօրին Աստուծոյ» քերթուածում, որը յայտնի է նաեւ «Բան ի Ֆրիկ գրքոյն» խորագրով, Աստծուն բացատրում է, թէ նա հայերին պատժում է, ինչպէս իսրայէլցիներին.

Որ բարկացար Հայոց ազգի,  
Որպէս Հրէիցն Իսրայելի.  
Զինչ բարկութիւն ի քէն թափի,  
Նա՛յ, ի վերայ մեր գայ՝ կուտի:<sup>23</sup>

Ալիշանն էլ նոյն հարցադրումն ունի.

Գիտեմ, գիտեմ այն մեր մեղաց պարտքն էր արդար,  
Սակայն երկնուց արդարութեան չունի՞ վրձար:  
Եւ հրէական ազգին նըման նըզովք յերես  
Դարէ ի դար յուսահատեալ տի գնա՞ն Հայերս:<sup>24</sup>

Ըստ պատմահօր «Հայոց պատմութեան» բանաստեղծը վերջի-շում է Հայաստանի թագաւորական գերդաստանները՝ Հայկազեաններին ու Արշակունիներին: Հայերն ունեցել են քաջ թագաւորներ՝ Արամ, Տիգրան, Տրդատ, այնպիսի հմուտ զօրավար, ինչպիսին Վարդան Մամիկոնեանն էր, ունեցել են իմաստուն ուսուցիչներ Սահակ Պարթեւ ու Մեսրոպ Մաշտոց, որոնք հէնց կըրթել են Մովսէս Խորենացուն:

21 Անդ, 238:

22 ԱԼԻՇԱՆ, Ղ., *Նուագներ*, 41:

23 Ֆրիկ, *Տաղեր*, Առաջաբանը, բնագրի պատրաստումը, յաւելումաժը Ա. Ղաւալանեանի, Երեւան 1982, 103:

24 ԱԼԻՇԱՆ, Ա., *Նուագներ*, 49:

*Ալիշանը սթափ հայեացքով է նայում իր օրերի Հայաստանի պատմական անմխիթար վիճակին ու ողբալով ասում:*

Ողբա՛մ, ողբա՛մ, հազար ողբամ գեեզ,  
Հայաստան,  
Երբեմն քիւր փառաց տեղիք, հիմա դամբան,  
Բո ծիրանիքն մերկացան, բո թագդ առաւ...<sup>25</sup>

*Բանաստեղծը շարունակ իրեն ողբակից է կանչում խորե-  
նացուն. վերջինիս օրերում հայերն այդքան ցրուած չէին օտար եր-  
կրներում:*

Որ գեայաստանն յօտարաստան քաւ ցան ցիր:<sup>26</sup>

*«Ողբամ գեեզ, Հայոց աշխարհ» քերթուածն աւարտուում է հաս-  
տատուն լաւատեսութեամբ. ծեր նահապետը պատրաստ է մեռնել,  
միայն թէ իր զաւակը՝ Հայաստանը, վերածնուի:*

Ո՛հ, բոզ մեռնի ծեր մահապետ, մոռնաւ տապան,  
Այլ բո՛ղ ելմէ՛ ի տապանէն մօր Հայաստան:<sup>27</sup>

*Դիմառնական բնոյթի է «Մասիսու սարերն» քերթուածը, ու-  
րում Հայաստանի ճակատագրի շուրջ զրուցում են Աւագ եւ Փոքր  
Մասիսները: Բանաստեղծութեան եզրայանգումն է՝ հայ ազգի բո-  
լոր զաւակները պէտք է լինեն միասնական, ու այդ դէպքում  
Հայաստանին սպառնացող թշնամիները կը պարտուեն:*

*Այդ եզրայանգումը Աւագ ու Փոքր Մասիսներին է ու միա-  
ժամանակ նահապետինը, որը յիշելով հայ հին վէպի մէջ եղած  
քաջութեան աստուած Վահագնի ծնունդը՝ պատգամում է ունենալ  
նոյն հզօրութիւնը:*

Շարժի՛ր, հա՛ շարժի՛ր Աւագըդ Մասիս,  
Արձան պարծանաց Հայոց աշխարհիս.  
Շընչէ՛, հա՛ շընչէ ծըխիկ ծիրանի,  
Որ բո մանկըտեացըդ մըշան ըլնի...<sup>28</sup>

*Ողջ էութեամբ քրիստոնեայ հոգեւոր բանաստեղծը գողտրիկ  
քերթուած է նուիրել Հայաստանի առաջին քրիստոնեայ նահատակ  
արքայադուտոր Սանդուխտ կոյսին, որին անուանում է Շուշան  
Շաւարշանայ: Յայտնի է, որ շուշան ծաղիկը Մարիամ Աստուա-  
ծածնի խորհրդանիշներից մէկն է՝ ամենատարածուածն ու սի-  
րուածը:*

25 Անդ, 46:

26 Անդ, 49:

27 Անդ:

28 Անդ, 57:

*Ինչպէս Գրիգոր Նարեկացին «Մեղեդի ծննդեան» տաղում Աստուածամօրը պատկերում է անթերի գեղեցկութեամբ, այդպէս էլ Ալիշանը չքնաղագեղ է պատկերում արքայադուստր Սանդուխտին՝ հայոց Սանատրուկ արքայի աղջկան։*

Կուսա՛նք Հայոց, նոր շուշան  
Տեսէ՛ք ի դաշտ Շաւարշան:  
Պայծառ պատկեր կուսանաց  
Հայոց պըսակ պարծանաց  
Ճակատն ի ֆող խորոտիկ...  
Փայլկըտան աչքն սիրուն:<sup>29</sup>

*Այս գեղարուեստական բարձրարժէք քերթուածի նիւթը Ալիշանը քաղել է Խորենացու «Հայոց պատմութեան» Երկրորդ գրքի ԼԴ. հատուածից, որի վերնագիրն է «Յաղագս վկայութեան առաքելոցն մերոց»։ Դրանում պատմում է Հայոց Սանատրուկ արքայի գահակալութեան ժամանակ Թաղէոս առաքեալի Հայաստան գալը եւ արքայի հրամանով վերջինիս ու նրա հաւատակիցների նահատակումը Շաւարշան գաւառում։ Թաղէոս առաքեալի աշակերտներից է եղել նաեւ Սանդուխտը՝ Սանատրուկ արքայի դուստրը, որի նահատակման մասին պատմահայրը գրում է. «...եւ մարտիրոսանալ դստերն արքայի Սանդիստոյ հուպ ի ֆանապարհն»<sup>30</sup>։ Ալիշանն օգտուել է նաեւ յետագայ դարերի պատմիչներից։*

*Բագրատունիների հայ թագաւորական ընտանիքում առանձնայատուկ տեղ է զբաղեցնում Աշոտ Երկրորդը՝ կոչուած Երկաթ։ Վերջինս, ինչպէս վկայում է ժամանակի պատմիչ Յովհաննէս Դրասխանակերտցին, արաբների ու յոյների կողմից ճանաչուել էր, որպէս «Հայոց Շահնշահ»։ «...եւ ի դերեւ ելանէր նորայն խոկացեալ դաւաճանութիւն եւ քիկունս Աշոտոյ դարձուցանէր, որ Շահանշահ անուանէր»<sup>31</sup>։*

*Սեւանի ճակատամարտը բեկումնային էր Աշոտ Երկաթի համար։ Նա փայլուն յաղթանակ է տանում արաբ Բշըր զօրապետի նկատմամբ եւ վերականգնում է Բագրատունեաց թագաւորութեան սահմանները։ Ահա այս վճռական ճակատամարտին է նուիրել Ալիշանը «Աշոտ Երկաթ ի ծովուն Սեւանայ» հայրենասիրական քերթուա-*

29 Անդ, 59:

30 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, 157:

31 ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴՐԱՍԽԱՆԿԵՐՏՅԻ, Պատմութիւն Հայոց, Աշխարհաբար քարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Գ. Բ. Թոսունեանի, Երևան 1996, 316:

ծը: Բանաստեղծը գեղարուեստորէն վերապատմում է ճակատամարտի յաղթական ընթացքը, որը նրան ոգեւորում է ասելու.

Երբ որ մըտար ի ծովս աստ՝  
Եիր Աշոտ լուկ երկաթ,  
Հիմ՝ որ ելնես՝ կուռ պողվատ:<sup>32</sup>

Ինչպէս Արամին, Տիգրանին, Տրդատին, այնպէս էլ Աշոտ Երկաթին Ալիշանը համարում է անձնագորհ, հայրենասէր թագաւոր, որի յիշատակով բանաստեղծը խանդավառւում է.

Հայոց հողուս դու կեանք տուր,  
Երկիմք քեզ տայ հրաքափ թուր,  
Նահապետին՝ սիրտ քանց հուր:<sup>33</sup>

Հայոց անցած փառքերին է նուիրուած Ալիշանի «Լուսընկայն գերեզմանաց Հայոց» քերթուածը, որ սեղմ ներկայացնում է Հայաստանի պատմութիւնը՝ սկսած Տիգրանի ու մարերի արքայ Աթաւհակի ժամանակներից մինչեւ Բագրատունիների սքանչելի Անին ու թաթարական արշաւանքները:

Բանաստեղծի համար անսահման սիրելի են հեթանոսական շրջանի բարգաւաճ ու յաղթական այն տարիները, երբ կառուցուել են փառահեղ Գառնի տաճարը, հռչակապ Արտաշատ մայրաքաղաքը, սակայն նոյնքան թանկ ու նաեւ քրիստոնեայ ժամանակներում Բագրատունիների կառուցած Անին, Երազգաւորսը, Բագարանը:

Նրան ոգեշնչում է Գրիգոր Լուսաւորչի ձեռքով քրիստոնէութեան մուտքը Հայաստան, որի սկիզբը հէնց առաջին դարում դրել էին Յիսուսի առաքեալները:

«Հայ հայրենիք» երգում մի քանի անգամ կրկնւում է «Յաւուռածագարդ» կրկնակը, իսկ բանաստեղծութիւնը իւրօրինակ ցանկութիւն է՝ տեսնել հայի հայրենիքը որպէս դրախտավայր.

Հայ հայրենեացս ելանք ի տես,  
Ահա տեսանք գաշխարհն Հայոց,  
Որ ըզդրախտիկն առնել ի ծոց:<sup>34</sup>

Հայաստանի դրախտավայր դառնալը Աստուածահաճոյ է, եւ Նահապետի սիրտը լցնում է անհուն բերկրանքով:

32 ԱԼԻՇԱՆ, Ղ., Նուագներ, 73:

33 Անդ:

34 Անդ, 81:

«Հայ համնար» բանաստեղծութեամբ Ալիշանը ցանկանում է հայերի մէջ արթնացնել վաղեմի փառքի յիշատակները, նաեւ ուսումնաստեղծութիւնը, հայի բացառիկ ընդունակութիւններն ու ստեղծարար ուժը: Նա յիշում է, թէ հայերն ունեցել են հայրենեայ պաշտպան քաջ զօրահրամանատարներ, հելլէն հանճարներին յաղթող հմուտ գիտնականներ: Սակայն ոչ մէկի մտքով թող չանցնի, թէ իր օրերում Հայաստանը կործանուած է, ո՛չ, նա ընդամէնը քուն է մտել եւ Նահապետի կոչով արթնանալու է ու նորից աշխարհին երեւալու է իր հանճարով:

Կերդնու Նահապետ, կանչէ ձեզ, Հայե՛ր,  
Համնարն է մեզ կեանք. ըզնա վառեցէք,  
Մեծ, պզտիկ՝ այտոր սիրով վառուեցէք...  
Ծագէ՛, հայ համնար, փայլէ՛ քիւր բոցեր,  
Իմանա՛ն ազգեր՝  
Թէ Հայք չեն անցեր:<sup>35</sup>

«Վերջին երգ վիրաւոր քամբռահարին» հիւսուածքն անպայմանօրէն ազդել է Մկրտիչ Պէշիկթաշլեանի 1862 թուականի Օսմանեան կայսրութեան դէմ մղուած Զէյթունեան ապստամբութեանը նուիրուած երգերի վրայ: Երիտասարդ բամբուռահար Փառէնը, երբ երգում էր հայ կտրիճների հերոսական գործերի մասին, մեռնում է, սակայն գիտակցում է, թէ իր հայրենասիրական երգերով մնալու է կենդանի:

Բամբուի՛կ, Փառէն կու մեռնի.  
Ապրի՛ն սէր ու երգ հայրենի.  
Բամբուի՛կ, մընա՛մք կենդանի:<sup>36</sup>

Ինչպէս պարզորոշ երեւում է, քրիստոնէական վարդապետութիւնն իր հոլթիւնը դարձրած Ալիշանը հայրենասիրութեան մեծագոյն ջատագով է, ուսուցիչ, պատգամաբեր:

Հայ պատմիչների հաղորդած փաստերով, ազգային կեանքն ու պետականութիւնը ամրապնդած լաւագոյն առաջնորդների օրինակներով ու իր երգերով նա մեծ հաւատով ապահովում է հայ ժողովրդի յաւերժութիւնը աշխարհի ազգերի կազմում:

ԱՆԵԼԻՏԱԿԱՆ ԴՈԼՈՒԽԱՆԵԱՆ

35 Անդ, 87:

36 Անդ, 89:

## Summary

# THE BIBLE AND THE HISTORY OF THE ARMENIAN PEOPLE IN THE POETIC WORLD OF FR. GHEVOND ALISHAN

AELITA DOLUKHANYAN

KEY WORDS: Ghevond Alishan, the Bible, Armenian historiography, hero, glory, future, statehood, military leader, Yeghishe, Movses Khorenatsi.

Ghevond Alishan is a romantic poet. The main sources of his poetry are the history of the Armenian people, the Old and New Testaments of the Bible and Armenian folklore.

As a historian, he praised the works of medieval Armenian historians, especially the authors of the Golden Age. The subject of his worship was Movses Khorenatsi, whose *History of Armenia* left a deep mark in the work of Alishan, a scientist and poet. His teachers of poetic art were Grigor Narekatsi, Nerses Shnorhali, Frick and poets of almost the whole Middle Ages, right up to the 18<sup>th</sup> century.

Of particular interest to us is the *Song of the Patriarch* section of the *Chants* collection, which will always be a modern recommendation for the Armenian people.

As it is clearly seen, Alishan, who made Christian teaching his essence, is a great supporter of patriotism, a teacher, a messenger.

According to the facts reported by Armenian historians, following the example of the best leaders who strengthened national life and statehood, with his songs he ensures with great faith the eternity of the Armenian people as part of the peoples of the world.